


ԳԼԵՆԻՐԻՍ
Ի Պոլսկայա
Տարեկ. 10 ֆր.
վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ
ԿԱՆԻՍԻԿ



ՊԵՏԵՐԵՔ
Գրութիւնքեա
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅՍՆԴԵՍ ԱԶԳՍՅՈՒՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿՍՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Դ. ՏԱՐԻ ԴԵԿՏ. 31 ԿԻՐԱԿԻ 1900 ԹԻԻ 193

ՀԱՅԵԼԻ

ԻՐ ԱՋՆԻԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

1 Յունուար 1901

1907 ԴԱՐՈՒ ՎԵՐՋԻՆ ԲԱՌՈՐԴԸ

Այն մակարոյծ մրոյներուն պէս, որոնց թիւը մեր մեղքէն ահագին համեմատութիւն մը կառնէ հետզհետէ, միտք չունինք երբէք «անցեալ կոչուած անհունութեան մէջ կորստող» դարուն հասցէին ուղղել ոչ փաղաքշական և ոչ ալ հայհոյալից ֆուզներ, չ'ստեղծել բնապատմական դէպքերու լաբիւրինթոսը, ուր շատ անգամ իրենք իսկ կը կորսուին և անճարակօրէն կը շլմոշին կը քնան խել մը տափակ, անլի, անկապ ու փոխունքի արժանի մանուածապատ դարձածքներու մէջ. բաւական կը համարինք արձանագրել միայն ընկերային ու հանրական մէկ քանի սրոշ թերութիւնները, որոնք աւելի եւս շեշտուեցան դարուն վերջին քառորդին մէջ մեր բարբերուն վրայ:

Անցեալ օր՝ ինչպէս բանիմաց բարեկամ մը իրաւամբ դիտել տուաւ մեզ, կրթական այն սղութիւնը՝ զոր քսան 30 տարիներէ ի վեր ֆրանսականին վրայ ձեւելու տիւմարութիւնը ունեցան մեր նախորդ ռահվերաներ, միակ պատճա-

ռը դարձաւ գրեթէ բարոյական ու յիւթական ահագին անկումին, ուր հայ ժողովուրդը սկսաւ տապկուիլ տարիներու ընթացքի մէջ նմանը չը տեսնուած գահավիժումներով:

Նաքօլէօն երրորդի ազդեցութեան շնորհիւ ֆրանսական լեզուն ու ֆրանսական կրթութիւնը անդիմադրելի հոսանքով մը ողողեց ամբողջ Արեւելքը. ուր ընդօրինակումի ամենէն աւելի ընդունակ հայ տարրը է նաեւ ծծեց, իւրացուց այդ կրթութեան ոչ թէ առողջ հիւթը, այլ եւ անոր սպաննիչ ու վարակող միքրոպները: Մինչև անգամ լսուեցաւ անոր դառանշող արձագանքը պաշտօնական շրջանակներու մէջ, ուր ֆրանսականէն օրինակուած խել մը ծրագիրներու մուտքը իբր ազատամտութեան յայտարար նշան ծափուեցաւ խելայեղօրէն: մեր սահմանադրութիւնը, մեր ուսումնական յայտագիրները, մեր խորհուրդներու և ժողովներու կազմութիւնները բոլորն ալ իրենց ձեռով ու դոյութեամբ կարծես երախտագիտական դարպասներ էին, որ կը մատուցուէին կրթական այդ փճացնող բուրդին. բարձրէն տրուած կորստաբեր օրինակներու յաճախումը հետզհետէ ծաւալ կը գտնէր հայ ժողովուրդին մէջ և սկսելով Ոստանէն մինչև գաւառները կապականէր յայտնի կերպով:

Այնպէս է «մօնչէն» «բըռօմընաթէ» կը վերագառնամ, հիւանդիս «օթէռասիօն» մը ընել տալու համար բժշկական «քօնսիւլթասիօն»ի մը պէտքը կզգամ. ասոնք ելնելով պարզ գէվզէկութեան մը վիճակէն, ալ կ'սկսէին թեթեւ կրթութեան մը շնորհիւ հոգեկան աւերումներու փրտախտը ցոյց տալ մեր անհատական ու ընկերային բոլոր կարգ ու սարքին մէջ:

Յոռից ցալուխ-ինչպէս կըսեն պատուելիները-վարակուեցանք այդ փտախտով և անոր վրայ ալ պատրաստեցինք ի հարկէ մեր անհատական

ու հանրային կեանքի ուղեցոյցը, զոր կարծէ ողբալ աղի աղի արցունքներով:

Էն առաջ մեր կրթարաններուն տուինք ֆրանսական կրթարաններու ծրագիրը, որոյ մանաւանդ կէս ու կիսատ դործադրութիւնը տըւաւ մեզի իմաստակ, յաւակնոտ, թեթեւ ու անբարոյական երիտասարդութիւն մը (ի հարկէ մեր խօսքը այն մասին համար չէ, որ ամեն խժժանքէ վեր է): որ սկսաւ իր կարգին փոխանցումի բնական օրէնքով իր յաջորդութիւնը պատրաստել յար և նման ծրագիրներով:

Այդ երիտասարդութիւնն էր, որ ընդգրկեց աղբիւն փրկութեան էն կարեւոր դործը, յեղափոխութիւնը և ճշմարիտ յեղափոխականներու տեղ խաչագողերու բանակով մը օժտեց հայրութիւնը:

Այդ երիտասարդութիւնն էր որ մեր Հայրենիքը արեան ճահիճ մը դարձունելու պատճառ դարձաւ և թէև ինք միշտ հեռին մնալով «պանա տէմէզ» սրկոյական երգը երգեց, բայց միշտ միշտ Հայաստանի առողջ ու ազնիւ տարրը անգիտակից ու անպատրաստ կռուի մը, որուն աղիտաբեր հետեանքը ծանօթ է ամենուն:

Այդ երիտասարդութիւնն էր որ բարիգեան քաֆէ շանթաններուն մէջ, Մօնթէքարլօյի խաղարաններուն մէջ, ֆրանսական ցովակեաց կեանքի մը ստեղծած բոլոր կոյրղիներուն մէջ մխրճուած ըլլալով հանդերձ, սրբութիւն, պարկեշտութիւն գոչեց և հայ բազմաշարժար ժողովուրդին առաջնորդներն ըլլալու յաւակնութիւնը սընոյց կատարեալ լրբութեամբ:

Այդ երիտասարդութիւնն էր որ պաամական մօտաւոր անցեալի մը մէջ յանձին հռչակաւոր խաչագողին... անոր անունով երդուընցաւ ու անոր անունով հիմն ու սկիզբը դրաւ աւագակային զինուորագրութեան, որի դրօշին տակ համախմբուեցան իրենք և սկսեցին արիւններու մէջ որդ փնտռել կշտանալու համար:

Այդ երիտասարդութիւնն է, որ տակաւին մինչև այսօր խեղճ ժողովուրդին ի դարման սքրիֆնենի բաղադրութիւնը կը հրամցունէ լըրբաբար: Գրագէտի հովեր առած չեն թողուր սըրբութիւն, պարկեշտութիւն, որ չ'սպաննեն: Մէկը յեղափոխական թերթի մը բոլոր խոշորութեամբը փոր խաղցնող աղջիկ մը ռէֆլաւն ըրած ատեն, միւսն ալ Գրական պնակալէզ թերթի մը բոլոր անպիտանութեամբը կիռլա հայ աղջիկին պատիւն ու պարկեշտութիւնը պաշտպանելու մտքով կենէ նկարագրութիւնը կընէ փոր խաղցնելու ձևին այնքան լպիրշ, զոր զանց կընենք յիշատակել ընթերցողներուս պարկեշտութիւնը չը վիրաւորելու համար:

(Եստուանկելի)

ԹՕՏԻՈՒՆ

Ծ Ի Ծ Ա Ղ

ԱՍՏԻՐ ԱՂԱՅԻՆ ԿԱՂԱՆԴԵՔԸ

Հօթէլ Մօքրէշի օտապաշի Տիւտիւղատէ Աստիւր աղան ուրբաթ գիշեր խանին սրճարանին մէջ իր սպասաւոր Թադոսին հետեւալ հըրահանքները կուտար:

— Թադոս, օղլում, մալիւմ ա, վաղը շաբաթ, քեանունի էվլէլին էստունն է, Բարսեղ հայրապետին վէ եփրեմ Խուրի Աստրին ալ տօնն է:

— Ըմմէն, ընդունելի արասցէ:

— Մնչուկ, քնթիգ տակէն իշ կու մուրմուրաս:

— Աղայիս աղօթիցը ըմմէն ըսի:

— Հէր իշտար ուր տարեգլուիը երկուշաբթիին թէսատիւֆ կանէ իսէ տը՝ թախումմի գիւլու ցաւեր՝ չարսու բաղար կիրակի օրը գոց է ըսելով պէլքի շաբաթէն կուգան պախշիշ կ'ուղին. պինաէն ալէյհ աբանսըղի չը գալու հըմար թէրթիպլի տալրանմիշ տըլլինք:

— Պէլի, էֆէնտըմ:

— Առտուն կանուխ խէյֆէին չէքմէճէէն հիյնոց մի կառնիս վէ մէշհուր Տապտուգլույին միւրաճաթ անելով տասը հատ քսաննոց խոշոր բօրթէքալ կառնես ու քօշէ մը կու դնես. մեղաւորըս շաբաթ վէ կիրակի վրաս բարի կիւյս վիճուածէ պէօհիւպիւրութիւն մի ունենալու սէպէպով օտայէս դուրս չի տի ելլեմ. պախշիշ ուղեւիք հէրիֆները գալու ըլլան իսէ՝ ֆէօս պէլէթմիշ կանիս վէ կուգաս ինծի կիմացնես ուր՝ լաեուխլուին ալիը բօրթէքալ մի դնինք ու քնցուր անինք:

— Աս թէրթիպը բէք պալվական տըլլի, աղա:

* *

Երէկ, շաբաթ առաւօտ, Թադոս աղբարը կը փութայ տասը հատ նարինջ գնելու և խանին սըրճարանին թռաքը շարելու: Կէս օրէն վերջը ժամը մէկին նամակատան ցրուիչը գալով աւանդական քարթը կը ներկայացնէ: Թադոս՝ ցրուիչը սրճարանը նստեցնելէ ետքը քարթը կը տանի Աստիւր աղային, որ սենեակը նստած եփրեմ Խուրի կը կարթար:

— Ի՞նչ է ան Թադոս:

— Բօշթաճուն ուշախը եկեր պախշիշ կ'ուղի:

— Էֆէնտըմ, աս տարի ադ բօստաճիւն վասէթալովը էրկրէն 10 նամակ առանք, ըմմէնքն ալ էսէֆէնիկ խապարներ բերող. 20 հատ էսհապը մաթլուպաթի Թարաֆէ մեղի գրուած Թախազալ

տախր մէք թուպներ բերած է. 9 հատ ալ համիլինէ թէտիլէ անելիք պօնօնեբում տալի թէլէկրաֆ վէ սու քառթա բօսթալներ բերած է. պիտէն ալէյհ. տահա ի՞նչ վիճտանով եկե՛ր մեզմէ պախշիշ կ'ուզի:

— Բօրթէքալ մի տամ ու քնցուր անիմ:

— Ձէ՛, առ ալ չըլնիր. (մտածելէ ետքը) ըսէ՛ ուր՝ շարթու մէջ թող գայ. հիշնոց մի կուտանք:

— Ասօր տանք իսէ չըլնիր:

— Ձէ՛, եէնի սէնէյէ մահուպէն միւթէֆէրիգա մէսարիֆաթի տէֆթէր չիմ բանար. հէմ գալիք շարթուան ձգինք նը՝ պէլքի կու մոռնայ չի գար վէ հիշնոցը կու վաստկինք:

Թաղոս աղբար հաղիւ թէ մարդը ճամբեր էր. Շարժումի ցրուիչը ներս մտաւ:

— Աստուր աղան հոն է.

— Հոս է ըմմա՝ քնչիյ մի պէօհիւզիւր է.

— Ըսէիր որ Շարժումի ցրուիչը ամանորի առթիւ նուէրը կը խնդրէ:

Թաղոս աղբար դարձեալ Աստիւր աղային կը դիմէ:

— Ի՞նչ կայ Թաղոս.

— Շարժումին մարդը եկեր ու նոր ամաններու բարա կ'ուզի:

— Մնչուկ, մնք նոր աման ե՞րբ առինք ուր.

— Շիտտակը ծառայական ալ ատանկ բան մի խաթրլամիշ չիմ անիր. էմիր կանիք իսէ՛ էթրաֆլուճա խթիճվապ մի անիմ:

— Տէ՛ գնա հասկցիր նայինք էֆէնտրմ, հասկցիր ֆիլվադը խանը բռնած ատեննիս մէջի լօգման թային հըմար եաղի վէ թուրչուի հըմար խափանօղներ առանք իսէ տը՝ եէկ թախթաէն բարան համբեցանք. Աստի չելլայ կաղանդի պախշիշ ուղեւու եկած ըլլայ. ճամբէ՛, թող շարթումէջ գայ:

Կէ՛ս ժամ վերջը Խաւառնի ցրուիչը կը մտնէ:

— Աստիւր աղա պուրտա՞մը.

— Պուրտա. պիր տէյէճէկիւն մի վար.

— Սէյլէյինիզ քի Իրաւունքըն ցրուիչի Սալը ճէտիտի թէպրիք իտէր.

Թաղոս աղբար նորէն Աստիւր աղային վրայ կը վաղէ.

— Կէնէ ի՞նչ կայ աղբար, կը մուտնաս ու կելլես կը մօտնաս ու կելլես:

— Էֆէնտրմ, Իրաւունքին մարդը եկեր ու ճիտիդ շալը կուզի:

— Ի՛նչ խալթ կանի, հեռու լողաց, նստած տեղս սօղո՞ւն տի տանք. Տէր Աստուած գիւն օղորմիս:

Թաղոս աղբար դուրս ելլելով ցրուիչին կըսէ.

— Շիմտիլիք կիթ տէ՛ իլք եաղըն հափալարը՝ «ընըրսա՛ կէլ, պէլքի օ վաղըթ քէնտինէ լազըմ օլմազ տէ վէրիլ»:

— Սիս ճանըմ, իլք եաղա գատար պէքլէմէլի իմիշ, ըսելով կառնէ կը քալէ:

— Նէ՛ իսթէրիւտիւն, պու սօղու գլարտա հէրիւֆ շալընը սանա վէրսի տէ քէնտիսի տօնսուն, էօյլէ՛ մի:

Մէկ ժամ ետքը «Հայելի»ի ցրուիչը կերեայ:

— Բարե Թաղոս աղա, էֆէնտին հոն է:

— Բարի եկիր պարոն աղա, պայվական քէֆիլըդ բարո՞վ է.

— Այէկ ըսինտ, շնորհակալ եմ, էֆէնտին ըսէիր որ կաղանդ ի առթիւ մի նուէրը չի մոռնայ:

— Աղէկ կըսիս ամա եափում, զաննա կաղանդը երկուշարթի է:

— Անանկ է ամա՝ Հայելին երկուշարթի չի հըրատարակուիր:

— Ասօր Աստիւր աղային քէթէրիզլի մէկ օրն է ըմմա՝ պայվական խաթերդ հըմար շամսու մին է պատին լիզարնիմ:

Եւ չորորդ անգամ տիրոջը սենեակը կը մտնէ:

— Պէ աղբար, դիւն էնչսփ բացիր գոցեցիր ուր՝ օտան ճիպ պուզ կըյրեցաւ:

— Քէրէմ ու հիմմէթ արէ աղա, անգամ մի ֆէօս գալուս մէֆումը հասկցիր. իւրիւնսումի Հայելին մարդը կաղանդէք կուզի:

— Քնցուր արէ:

— Բօրթէքալ մի տամ ձեռքը.

— Սախըն հա՛, հէր իշտար ուր բօրթէքալնեը անոնց հիսապին առնուեցան իսէ տը՝ գրչերս միւլահաղա արի ուր՝ անոնք պայվականապէս մենք ուտելու եինք. Պինաէն ալէյհ գնա իրեն ըսէ ուր Աստիւր աղային ֆիլմիւէնցա եղեր ու զայ ախուլ (վրաս բարի) հիւանդ պառկած է ու քեաֆֆէի աղանը կը մոռցմուկա:

Թաղոս աղբար սենեակէն դուրս կելլէ:

— Պարոն աղա, Աստիւր աղան հիւանդ է. ֆանկ ֆինկ բաներ մի օլըրտկեց ըմմա՝ մէֆումը չհասկցուիր. դուն իս մտիկ կընես իսէ՛ շարթուս մէջ եկուր:

Ահա այսպէս ցրուիչները ճամբու դրուելէ ետքը Աստիւր աղան նարինջները թաշկինակի մը մէջ դրած նոյն իրիկունը իր տունը տարեր է:

ՋՈՒԹԱԿ

ՓՈՒՐ ԹՂԹԱՏԱՐ

Տ. Ս. Տ. Ֆօքչան. — մեր թերթինը պիտի սկսինք յաճորդ թերթով, իսկ «Այինէի Լէթայիֆ»ը պիտի հրատարակենք այն ատեն՝ երբ ըստ պայմանի 200 բաժանորդ ունենանք: Մինչև իմա 140 անձինք ստորագրած են:

ԿԵԱՆՔԻՆ ՄԷԿ ՄԱՆՐԱՆԿԱՐԸ

ՎԱՅՐԿԵԱՆ ՄԸ

ԿԵՍ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՄԷՉ

Ընթերցող բարեկամք, չգիտեմ թե՛ դուք ալ ինծի պէ՞ս էք. երբ ես դիպումս Մօնմարթի բլրակներէն մէկուն վրայ կը գտնուիմ, ուր աչքիս առջև կը տարածուի Բարիզը իր ամբողջութեամբը և հազար տեսակ եղական մտածութեանց մէջ կը խորասուզիմ: Ու ինքնիրենս կը հարցնեմ թե՛ այս մեծատարած և շքեղ քաղաքը, քաղաքակրթութեան կեդրոնն ու մայրաքաղաքը, մէկ վայրկեանի մէջ գրեթէ իրարու քով զիրար հակասող ինչ տեսարաններ կը ներկայացուին: Ահա կ'ուզեմ ձեզի ցուցնել այս մէկ վայրկեանը, այն խրատ կարճ ժամանակամիջոցը որ մարդկութեան այլազան կեանքին մէկ մանրանկարն է:

Ուրեմն ձեր աչքին առջև կը տեղաւորեմ այդ կեանքին հակապատկերները ցուցնող բաղմադիտակը:

Նախ կը տեսնենք Անգլիական շքեղ փառք մը ուր երկու աշխարհիկ կիներու հետ երեք կենցաղասէրներ նստած կը զուարճանան. անոնցմէ մէկը կը հարցնէ.

—Ուր է Կիւսթավը:

—Կիւսթավ այն աստիճան գինովցած է որ սեղանէն վար սահեցաւ և մեռելի պէս գետինը տարածուած է:

—Հաւատացէք որ ես ալ անկէց վար չեմ մնար: Աշխարհիկ աղջիկներէն մին. —Ինչ մտիկ ըրէք, կուզէ՞ք որ մեր այս խնճոյքին լաւ վերջաւորութիւն մը տանք:

—Այո՛, այո՛:

—Ուրեմն սա սեղանին վրայ գտնուած պնակներն ու գաւաթները կտրենք:

Երկրորդ աղջիկը. —Ձէ՛, չէ՛, աւելի լաւ է որ սեղանին վրայ ֆաշտիկ մը խաղանք:

—Ողէկ ըսիր Յաննի. բայց կեցիր սա ֆօռսես հանեմ, վասն զի շատ կերայ:

—Արդէն ամենքս ալ ճաթելու աստիճան կերանք ու խմեցինք:

(Նոյն միջոցին գիտակը դարձունելով կը տեսնենք ձեզնայարկ մը, ուր աղքատիկ կին մը խշգեակի մը վրայ կծկտած է, իր քովը ունենալով կիսամեռ երկու զաւակներ):

—Մայր անօթի եմ:

—Մայրիկ, ես ալ շատ անօթի եմ, դուն մեզի խոստացար հաց բերել բայց պարապ եկար:

Մայրը—Անուշիկ զաւակներս, այս գիշեր քենայէ՛ք, հայրերնիդ որ հիւանդանոցն է, աղէկ նալու վրայ է. քիչ ատենէն պիտի կրնայ աշխատիլ և ձեզի հաց բերել:

—Բայց մայր իմ, այնչա՛փ անօթի եմ որ չեմ կրնալ քնանալ:

—Ախ... ուրեմն եկէք դուրս ելլենք ու անցորդներուն գլխութեանը գիմենք:

(Ու ահա այս երեքը փողոցին մէջ կը դիմաւորեն երկու անձեր որոնք թեկ թեկ խօսակցելով կուգան:)

—Էրնէ՛սթ, իրաւոր, իշխանաց պանդոկի կերակուրները լաւ էին:

—Այդպէս էր սիրելիդ իմ Կօթրան, բայց ըստամոքսս անհանգիստ ըրին:

—Յանցանքը քուկդ է, եղբայր անյադարար կերար:

Կինը—Գլխութիւն բարեփրտ պարոններս:

—Ձեզ հանգիստ թող, կնիկ, չե՞ս գիտեր թե՛ ոստիկանութիւնը արգիլած է մուրացիկներուն Բարիզի փողոցները սլքողալ:

—Գլխացէ՛ք աղնիւ պարոններ, երկու պղտիկ զաւակներս անօթի են:

—Ձրսե՛ս ուրեմն թե՛ բաղդաւոր են ատոնք, երանի՛ թե՛ մենք ալ բան մը կերած չըլլայինք, սրովհետեւ շատ անհանգիստ ենք այն անիծեալ բաղմախորտիկ սեղանը վայելելու համար: Է՛հ, բարի եկար:

(Նոյն վայրկեանին Կիտալինիս կուղղենք հիւանդ հոգեարի մը սենեակը, ուր կինը արտասուելից աչքով կը հարցնէ բժշկին:

—Այսպէ՛ս ուրեմն տօթթէ՛օռ, սյլ ևս յոյս չի կայ իրմէն:

—Կը ցաւիմ ըսելու տիկին թե՛ ձեր ահուսնոյն վիճակը շատ ծանր է:

Հոգեվարը—Սիրելի կինս ու անուշիկ զաւակներս. ո՛ւր էք, մօտեցէ՛ք որ ձեզ տեսնեմ ու վերջին անգամ ալ գրկեմ... ո՛հ... շատ գէշ ցաւ մը կըգամ:

(Այս միջոցին հոգեվարքին մարած ձայնը կուգան խեղդել զուարթ և ուրախութեան տղաղակներ ճիշդ քովի տունէն ուր ծննդաբերութիւն մը տեղի ունեցած էր նոյն պահուն:

Բժիշկը—Աչքերնիդ լոյս պարո՛ն, մանչ զաւակ մը ունեցաք):

Հայրը—Ո՛վ երջանկութեանս, ամբողջ կեանքիս մէջ միակ երազս իրականացաւ. ահ սիրելի տօթթէ՛օռ, որչա՛փ ուրախ եմ չես գիտեր, կուզեմ այս պահուս ամբողջ աշխարհի մարդերը սիրել ու գրկել:

Մայրը—Նորածինս գիրկս տուէ՛ք, տուէ՛ք իմ պէպէս որ սիրեմ եւ հիանամ իրմով։

(Հաղիւ թէ այս հակապատկերները կը տեսնենք՝ ահա մեզ կերևայ վաճառականի գրասենեակ մը, ուր չքեղ գրասեղանի մը առջև գերմէկը նստած, իր առջև ունենալով թուղթերու դեզեր, բաց ու գոց տօմարներ, կը լսուի հետեւեալ մենախօսութիւնը)։

—Էհ, վերջապէս լաւ շահեցայ այս տարի. հանգիստ ապրելէ ու դրամագլուխս ալ բաւական աւելցնելէ ետքը հիմա ալ պիտի կրնամ կնոջս ծանրագին ընծայ մը տալ։ Մինչև կէս գիշեր արթուն մնալս պարապը չը գնաց։

(Միւսնոյն ատեն դիտակը մեզի ցոյց կուտայ ուրիշ գրասենեակ մը ուր նիհար մտրդ մը նստած է գլուխը ձեռացը մէջ առած, տենդոտ ու մտաւանջ վիճակի մէջ)։

—Ահ, ամեն ատեն ձախորդութիւնը եղած է իմ բաժինս. ի՞նչ ընեմ չգիտեմ, դրամարկղիս մէջ 3000 ֆրանք ունիմ, մինչդեռ վաղը պարտիմ վճարել 7500 ֆրանք։ Առնելիքներս չեմ կրնար գանձել ու մէկէ մը չեմ կրնար փոխառութիւն ընել. վասն զի... վասն զի... օ՛ֆ, այս ի՞նչ վիճակ է, զիս պիտի խենդեցնէ։

(Նոյն միջոցին զարգարուած սենեակ մը կը պարզուի մեր աչքին առջև, ուր երկու նորապեւսակ ամուսնի իրենց հարսանեկան երեկոյթէն եկած են առանձնանալու)։

—Վերջապէս, սիրելի Անժէլ, մեր տունն ենք եւ առանձին. որչա՛փ կը փափագէի այս վայրկեանիս եւ ի՞նչ մեծ անհամբերութեամբ։

—Բօ՛լ, ուրեմն զիս այնչափ կը սիրես։

—Ո՛հ եթէ հայրդ մերժեր քու ձեռքդ ինձի տալը, անձնասպան կըլլայի։

—Ես ալ վա՛նք մը կը քաջուէի, Բօ՛լ։

—Ո՛հ, հոգւոյս հատորը։

—Պիժո՛ւս...

(Ահա այդ սենեկին կից տանը սենեակին մէջ նոյն միջոցին կանցնէր հետեւեալ խօսակցութիւնը, որ 30 տարիներէ ի վեր ամուսնացած զոյգ մը կը բնակէր)։

—Անիծեալ ըլլա՛ս կնիկ, որ վերջապէս զիս պիտի մեռցնես. ա՛լ բոլորովին անտանելի ես. ուսկից ալ դէմս ելար։

—Ատանկ վայրենիի մը պէս մի՛ ոռնար, կը կարծես թէ քու ներկայութեանդ հաճոյք կզգամ։

—Բայց հանգիստ թող զիս որ քիչ մը հանգարտ քնանամ։

—Ճիւղալիս բնութիւն մը ունիս. եթէ անհանգիստ ես, երկու սենեակ վարձէ որ զատ զատ բնակինք։

—Ախ, կնիկ, 30 տարի է հետդ ամուսնացած եմ, 29ու կէս տարի է որ փափագս ու երազս միշտ այդ բանը եղած է...

(Ահա պարահոնգէսի մը մէջն ենք)։

—Ի՛նչպէս գտաք նշանածս։

—Խիստ գեղեցիկ։

—Եւ տարեկան 300,000 ֆր. ալ եկամուտ ունի։

—Հիանալի բան... Բայց Հօրթանսը ձգեցի՞ր։

—Անշուշտ, քանի որ ութ օրէն պիտի կարգուիմ։

—Բայց Հօրթանսը, այն երիտասարդ գործաւորուհին որ անկեղծօրէն կը սիրէ զքեզ, այս անակնկալ լուրէն պիտի յաւաստի։

—Արդէն իմացած է։ Բէ՛հ, զայն միտիժարելու համար 500 նաբօլէոնի թուղթ մը կը զրկեմ, որով գո՛հ կը մնայ։ Երթամ քօլֆա մըն ալ դառնամ նշանածիս հետ։

(Ու երբ երիտասարդը նշանածին հետ կը պարէր, ուրիշ տեսարան մը կը պարզուէր անդին. Սէնի եզերքը։ Հօրթանսէր որ ուրուականի մը պէս գետեզերքը կեցած կը մենախօսէր այսպէս)։

—Ալ չեմ կրնար ապրիլ, լաւագոյն է վերջ տալ այս կեանքին որ ամբողջութեամբ թունաւորուեցաւ։ Ահ, չեմ ուզեր որ մէկը տեսնայ զիս, վասն զի աղատիլ չեմ ուզեր, եւ մարդիկ, ախ մարդիկ այնչափ չար են որ չեն ձգեր մէկը որ վերջ տայ իր վիշտերուն եւ աղատ մեռնի։

(Զուրը կը նետուի)։

(Նոյն միջոցին փողոցէ մը կանցնին պարահանուէսէ վերադարձողներ)։

—Է, ժանէթ, ի՛նչպէս ժամանակ անցուցինք այս գիշեր։

—Սքանչելի սիրելի ժագս, քանի որ զքեզ ունիմ միշտ քովս, եւ հիմա որ պիտի բաժնուինք, պիտի վշտանամ, կուզեմ որ ճամբանիս երկարի։

(Միւս փողոցին մէջ ալ հետեւեալ տեսարանը կանցնի)։

—Օ՛ն, քսակդ կսմ ժամացոյցդ։

—Գո՛ղ կայ... օգնութիւն...

—Մի՛ պոռար, կ'սպաննեմ քեզ։

(Ու վերջին տեսարանն ալ տեղի կունենայ ոստիկանատան մէջ)։

Տասնապետը—Պահակներ, կէս գիշերուան չըջաննիդ կատարեցի՞ք։

—Այո, տասնապետ։

—Դէպք մը, բան մը կայ։

—Ոչինչ տասնապետ, ամեն կողմ հանդարտ ու խաղաղ է... (?)

Թարգմ. Ս.

ԱՏՐԻԷՆ ՀԵՒԱՐ

ԱՉԳԱՅԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՉԳ

Թաղական խորհուրդս նկատելով որ կարգ մը ան-
ձինք բարեգործութիւն ընելու պատրուակաւ արգոյ հա-
սարակութեան քսակը կը շահագործեն թատերական ներ-
կայացումներով կամ հանգանակութեան ձեւին տակ, կը
փութայ յայտարարել թէ՛ եթէ այդ կարգի անձինք
ներկայանան դրամ հաւաքելու, պէտք է ի ձեռին ունե-
նան Թաղ. խորհրդոյս կողմանէ վաւարացեալ մի պաշտո-
նագիր. հակառակ պարագային կը յորդորեմք արգոյ
ազգայինները մերժել այդ կարգի անձանց ու է ձեռնտու-
ութիւն ընել:

Ի դիմաց Թաղ. խորհրդոյ

Ատենապիր

Ատենապետ


Ս. Գաբրիելեան Յ. Մ. Թովմանեան

Վառնա, 27 Դեկտեմբեր:

Հայեջի. — Թաղ. խորհուրդը պարտաւոր է
սոյն օրինակ ազդագիր մըն ալ տեղական օտար
թերթերու տալ, որպէս զի միմիայն երկու պաշտ-
պանեալ իսկ 60-70 հարուստ թոշակով աշակերտ
ունեցող հաստատութիւններ «էրմէնի մէքթէպի-
նին» էօքսիւզ վէ ֆուգարա չօճուգլարը իշխան տիրո՞
յայտարարելով և կամ «կայէթ ֆաքիր վէ սէֆիլ
ֆամիլեալարը գայըրմագ իշխան տիրո՞» ըսելով օ-
տարազգիներն ալ խաբող շահագէտներուն յան-
դգնութեանցը վերջ տրուի: Այդ շահագէտները
գիտնալով որ օտարազգիներուն քով ալ իրենց
ճառսն առնուած է, այս վերջերս նոր միջոց մը
գտած են, այն է տիկիներու ձեռքով սոմսակ
վաճառել, բան մը որ պատիւ չը բերեր ազգին:

— Սիւլէնէ մեզ կը գրեն թէ տեղւոյն դըպ-
րապետը, Բովհաննէս Տ. Մինասեան, որ Ս. էջ-
միածին գացած էր, Սիւլէնի Ս. Ստեփանոս եկե-
ղեցւոյն վրայ քահանայ ձեռնադրուեր է, և այժմ
կը կոչուի Տ. Վաղինակ:

Նորապսակ Տ. Հայրը վերադառնալով Սիւ-
լէն, իւր անդրանիկ պատարագը մատուցեր է:
Կը մաղթենք որ Տ. Վաղինակ հայր պարտաճա-
նաչ և իր խնամոցը յանձնուած ժողովուրդին
արժանի հովիւ մը ըլլայ:



ՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

(ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ)

Կէրէք Պուլկարիա վէ կէրէք Ռուսմանիա
միւթէմէքսին միլլէթտաշարըմըզտան պիր դը-
մընըն արզուսու իւզրէ, լիսանը թիւրքէ օլա-
րագ եալընըլ լէթայիֆ վէ ֆէննի էյլէնճիլէրի
հալի իշպու քիթապըն նէշրինէ միւպաշիրէթ
իտէճէրը՝ էկէր 200 ապօնէմիլ օլուրսա:

Շիմտիլէ դատար 140 ապօնէլէր իմզալամըշ-
լար տըր:

Պու կիպի լէթայիֆ վէ ֆէննի էյլէնճիլէրէ
տաիր քիթապլար՝ կիւզէլէն ճիւլէնէրէք՝ էվլու-
բատա բէք չօդ խանէլէրտէ մէվճուլ օլուպ, կէ-
րէք տէրունի խանէտէ պուլունանլարըն վէ կէ-
րէք միսաֆիրլէրին՝ պագէն վագըթլարընը ֆէն-
նի էյլէնճիլէր վէ լէթայիֆի ֆգրալար դրաա-
թըյա կէշիրմէլէրինէ պիր կիւզէլ վալթա օլ-
մագտա տըրլար:

ԱՊՈՆԷ ՖԻՅԱԹԼԱՐԸ

20 նիւսիսէտէն (160 սահիֆէ) իպարէթ օլաճագ
պէհէր ճիւլ իշխան Վարնատա 7 1/2 ղրուշ:

Պուլկարիա շէհիրլէր վէ քէօլլէրի իշխան բօսթա
իւճրէթիլլէ 8 1/2 ղրուշ:

Ռուսմանիա վէ սաիր խարիճի մէմալիքէ օն նիւս-
խէսի պիրտէն բաքէթ պաղլանըպ կէօնտէրիլ-
տիքտէ՝ բօսթա իւճրէթիլլէ եինէ 8 1/2 ղրուշ. ան-
ճագ պիր զաթ իշխան մախսուսէն կէօնտէրիլտիք-
տէ՝ 2 ֆրանք:

10 ապօնէ պուլանա պիր նիւսիսէ մէճճանէն վէ-
րիլիր: Պէտէլի ապօնաթ Բէճին տիր:

Թապ ու նէշրի խիթամընտա պէհէր ճիւլի վար-
նատա 10, թաշրա վէ խարիճի մէմալիքտէ բօս-
թա իւճրէթիլլէ 11 ղրուշա ֆիրուլթ օլունա-
ճագ տը:

Էլտէն սաթըլաճագ Վարնատա 8 սահիֆէլիք
պիր նիւսիսէսի 10 սանթիմէ:

ԱՏՐԷՍ

DIBAN PAPAZIAN

YELDIZ TABIA

BULGABIE

VARNA

Печатница „Взаимность“ — Варна.